

Handwritten text in cursive script, possibly a name or title.

Handwritten text in cursive script, appearing to be a list or series of entries.

623.459

5-16

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ՝ ՄԻԱՅԷ

**ՊԱՏՐԱՍ ՅԵՂԻՐ  
ՀԱԿՈԴԱՅԻՆ ՅԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**

Կ Ա Ջ Մ Ե Յ Ա. ՄԱԼՇԻՆՍԿԻ

Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Չ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  
Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1935

623.459  
Մ-16

04 AUG 2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ՝ ՄԻԱՅԵ

623.453  
Մ-16

Պ Ա Տ Ր Ա Ս Տ Յ Ե Ղ Ի Ր  
ՀԱԿՈՂԱՅԻՆ ՅԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՋԵՌՆԱՐԿ «ՊԱՏՐԱՍՏ ՀՈՔՊ-Ի» ՆՈՐՄԱՆԵՐԻ  
ՀԱՆՁՄԱՆԸ ՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Կազմեց Ա. ՄԱՂՇԻՆՍԿԻ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1935

Պատ. խմբագիր Մ. Գավրյան  
Թարգմ. Հ. Մկրտչյան  
Տեխ. խմբագիր Գ. Զեյնյան  
Սրբագրիչ Մ. Ալեխանյան



416  
38

Հրատ 3367 Գլավ. 227 Պատ. 811 Տիրած 3000  
Հանձնված է արտադրության 27 հունիսի 1935 թ.  
Ստորագրված է տպագրության 16 հուլիսի 1935  
Պետերատի Տպարան, Յերևան, II դնունի փ.

ԱՌԱՋԻՆ ՆՈՐՄԱ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ԹԵՄԱ 1. ՊԱԶ-ԱՎԻԱՔԻՄԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱԿՈՂԱՑԻՆ և ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

Մենք, սոցիալիզմ ենք կառուցում և պաշտպանում ենք խաղաղության գործը: Սակայն մեզ շրջապատող բոլոր պետություններում իշխանությունը գտնվում է բուրժուազիայի ձեռքում: Յերկարատև, ձգնաժամի հետեվանքով իմպերիալիստների լազերում խիստ սրվել է պայքարը լերկրագնդի վերաբաժանման համար: Իմպերիալիստները տենդորեն սպառազինվում են, ավելացնում են բանակները, անընդհատ կատարելագործում են մարտական տեխնիկան, պատրաստվելով պատերազմի՝ ամենից առաջ ԽՍՀՄ դեմ: Առանձնապես ուժեղ չափով զարգանում են ռազմական ավիացիան, սանկերը յեվ ֆիմիան: Խիստ աչքի յե ընկնում ռմբաձիգ ավիացիայի՝ — հեռավոր թիկունքների վրա, հարձակվելու այդ հիմնական միջոցի, — արագ աճումը: Արդեն կան ուժակիրներ, վորոնք բարձրացնում են մինչև 12 տոնն ոււմբ և ընդունակ են ողում մնալու 7—8 ժամ, ունենալով մի ժամում մոտ 200 կիլոմետր թռիչքի արագություն: Քիմիան ավիացիային զինել է թունավորող և հրձիգ նյութերով: Այս հանգամանքը խիստ ավելացրել է ավիացիայի մարտական ուժը, հնարավորություն տալով վարակելու թունավորող նյութերով ընդարձակ տարածություններ, ողի

հսկայական ծավալներ և բազմաթիվ հրդեհներ առաջաց-  
նել վոչ միայն անմիջորեն ռազմաճակատում, այլ յնվ  
հեռավոր քիկուցում:

Մեր մեծ հայրենիքի աշխատավորները պետք է վա-  
ղորոք պատրաստված լինեն ողային թշնամու հարձակում-  
ներից պաշտպանվելու համար: Այդ պաշտպանությունը  
պետք է այնքան լավ կազմակերպված լինի դեռևս խա-  
ղաղ ժամանակ, վոր քաղաքները, արդյունաբերությունը,  
գյուղատնտեսությունը, ելեքտրակայանները, տրանս-  
պորտը և այլն կարողանան անխափան շարունակել իրենց  
աշխատանքը հակառակորդի ողային հարձակման ժամա-  
նակ:

Հակառակորդի ողային տորմդի դեմ պայքարելու մի-  
ջոցներն ու միջոցառումներն ամբողջութամբ առած կազ-  
մում են հակողային պաշտպանությունը (ՀՈՊ): Նրա  
կարևորագույն մասերից մեկը հանդիսանում է այն թու-  
նավորող նյութերից (կրճատ՝ «ԹՆ») պաշտպանությունը,  
վոր գործադրում է ավիացիան, այսպես կոչված հակա-  
քիմիական պաշտպանությունը (ՀՔՊ):

Պատերազմի դեպքում հակողային պաշտպանության  
առաջին խնդիրը կլինի պայքարել հակառակորդի ողային  
տորմդի դեմ՝ իր ուժերի ավիացիայի միջոցով, հարձակ-  
վելով հակառակորդի այբորդումները վրա և իր կործանիչ  
սավառնակներով ողում վոչնչացնելով թշնամու ավիացիան:  
Ամրացնելով իր ողային տորմիդը, խորհրդային Միության  
աշխատավորներն ստեղծում են հակողային պաշտպանու-  
թյան ամուր հիմքը:

Ոգնելով ողային տորմին, հակողային պաշտպանու-  
թյունը կկատարի իր յեբկորդ խնդիրը՝ այն է, բոլոր  
միջոցներով խանգարել հակառակորդին ողային հարձա-  
կումներ կատարելու: Դրա համար հակողային պաշտպա-

նությունն իր տրամադրությունն տակ ունի հատուկ հա-  
կողային (գենիթային) հրետանի, գենիթային գնդացրեր  
և այլ կրակային ու դրանց ոժանդակող միջոցներ:

Սակայն յեթե հակառակորդի ողային ուժերի մի  
մասը ճեղքի ճակատը և գրոհի այս կամ այն բնակավայրը,  
ապա հակողային պաշտպանությունը պետք է պատրաստ  
լինի կատարելու իր յեբկորդ խնդիրը՝ նվազեցնել այն  
վնասները և կորուստները, վոր կարող է հասցնել թի-  
կունքն անցած ողային թշնամին, և արագորեն վերաց-  
նել հարձակման հետևանքները: Այս նպատակով հակո-  
ղային պաշտպանությունն ոգտվում է հակաքիմիական,  
հակահրդեհային և սանիտարական պաշտպանության գա-  
նազան միջոցներով, ապաստարաններով՝ վորոնք պատրա-  
սարում են ողային ուժերի ներգործությունից, քո-  
ղարկումով և այլն:

Պաշտպանությունը հակողային և քիմիական պաշտպանու-  
թյան (ՀՈՔՊ) բնագավառում պարտավոր է՝ 1) հակագա-  
զեր տարածել բնակչության մեջ և սովորեցնել նրանցից  
ոգտվելու ձևը, 2) վերացնել աշխատավոր բնակչության  
հակողային և քիմիական անգրագիտությունը՝ «պատրաստ  
ՀՈՔՊ—ի նորմաները հանձնելու միջոցով, 3) կազմա-  
կերպել տներում, բնակավարձկոպներում, դպրոցներում,  
մանր ձեռնարկություններում և հիմնարկներում պաշտ-  
պանական ախտիվ ինքնապաշտպանության խմբակներ,  
սովորեցնել այդ խմբակները և շենքերը պատրաստել  
հակողային և քիմիական պաշտպանության համար:

«Պատրաստ ՀՈՔՊ—ի» նորմաներն ընդգրկում են  
այն դիտելիքները և ունակությունները, վորոնց խՍՀՄ  
ամեն մի աշխատավոր պետք է տիրապիտի ամենամոտ  
ժամանակում, վորպեսզի կարողանա կազմակերպված դի-  
մավորել ողա—քիմիական վտանգին, ապահովել անընդ-

հատ աշխատանքն իր ձեռնարկության մեջ թշնամու  
ողային հարձակման պայմաններում և կարողանա արա-  
գորեն վերացնել հարձակման հետևանքները: Յուրաքան-  
չուր աշխատավորի պարտքն է՝ լինել Պաշտպանության  
շարքերում, ախտվորեն մասնակցել բնակչության հա-  
կողային և քիմիական պաշտպանությունը, ինքն ևս պետք  
է անհրաժեշտ գիտելիքներ և ունակություններ ձեռք  
բերել հակողային և քիմիական պաշտպանության վերա-  
բերյալ:

## ԹԵՄԱ 2. ՈՂԱՅԻՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ռմբաձիգ ավիացիան հարձակումների ժամանակ գործ  
է ածում ավիացիոն ուղիքներ և հարվածելու հատուկ մի-  
ջոցներ:

Ավիացիոն ուղիքներ ստորաբաժանվում են հետևյալ  
հիմնական տիպերի՝ ֆուգասային, բեկորային, քիմիական  
(ԹՆ. պարունակող) և հրձիգ:

Ֆուգասային ուղիքներ լցնում են խիստ ներգործող  
պայթուցիկ նյութերով, վորոնք ծառայում են կառուց-  
վացքներն ավիրելու համար: Այդ ուղիքների քաշը զանա-  
զան է լինում, սկսած 50 կիլոգրամից մինչև 2000 կի-  
լոգրամ, ընդ վորում ուղիքի քաշի կիսից ավելին կազ  
մում է պայթուցիկ նյութը: 50—150 կգ քաշ ունեցող  
ուղիքները կարող են ավերել քաղաքային և արդյունաբե-  
րական տիպի կառուցվածքները:

Բեկորային ուղիքներ նշանակվում են կենդանի  
նպատակները հարվածելու համար: Ռուղիքը գետնին ընկ-  
նելով պայթում է, տալով բազմաթիվ բեկորներ, վորոնք  
կարող են ուղիքի պայթման տեղից 50—300 մետր հեռա-  
վորություն վրա սպանել կամ վիրավորել: Այս տիպի ուղիքի  
քաշը լինում է 8-ից մինչև 50 կիլոգրամ:

Քիմիական ուղիքներ լցնում են մարտական թու-  
նավորող նյութերով: Այս ուղիքները լինում են բախական  
և հեռակայական գործողություն: Առաջինները պայթում  
են գետնին զիպչելիս, լեկորողները՝ պայթում են ոդում,  
մինչև գետնին հասնելը: Կայուն թունավորող նյութերով  
լցված բախական ուղիքները (այսինքն՝ աջնախիթ ԹՆ,  
վորոնք իրենց հարվածող ազդեցությունը վայրում պահ-  
պանում են մի քանի ժամվա կամ նույնիսկ մի քանի ու-  
վա ընթացքում), գլխավորապես, գոծադրվում են վայրը  
վարակելու համար և սովորաբար վորք քաշ են ունենում  
10—15 կիլոգրամ: Առաջինի մեկ ուղիքը վարակում է 300  
—500 քառակուսի մետր տարածություն: Չուզակցված  
ֆուգասային ուղիքների հետ նման ողաքիմիական ուղիքները  
սովորաբար գործադրվում են թիկունքային կետերի ուրմ-  
բակոծման համար, վորովհետև ԹՆ (սովորաբար իպրիտ՝  
մաշկը վերքոտող նյութ) չափազանց կոծվարեցնեն  
ավերված որջեկանների վերականգնման աշխատանքները:

Հեռակայական ուղիքներ կայուն և անկայուն թու-  
նավորող նյութերով կարող են մեծ չափեր ունենալ՝ 100  
և ավելի կիլոգրամ: Նրանք գործադրվում են թե՛ վայրը  
թունավորելու և թե՛ կենդանի ուժը հարվածելու համար:  
Պայթելիս նրանք տալիս են ԹՆ բազմաթիվ մանրիկ կա-  
թիլներ և մառախուղ՝ վարակելով ողի զգալի տարածու-  
թյուն և ԹՆ անձրևով պատելով մեծամեծ տարածություն-  
ներ:

Հրձիգ ուղիքները հանդիսանում են թիկուղի վրա հար-  
ձակում գործելու ամենաազդու միջոցներից մեկը:  
Նրանք գլխավորապես լցվում են տերմիտային խառնուր-  
դով (լեկաթաթթվուտի, կավահողի և փոշենման ալյու-  
մինի խառնուրդ): Տերմիտն այրվելիս տալիս է մինչև  
3000 աստիճան ջերմություն: Այրվող տերմիտը չի կարելի

Ջրով հանգցնել: Հանգցնելու լավագույն միջոցը՝ ավազն  
է: Հրձիգ ուռմբերի քաշը փոքր է լինում, մեկ կամ մի  
քանի կիրոգրամ: Մեկ ումբաձիգ սավառնակ կարող է  
վերցնել մի քանի հարյուր և նույնիսկ հազարից ավելի  
այդպիսի ուռմբ:

Հարվածելու հատուկ միջոցների շարքին է  
պատկանում հեղուկ թ՛ն փոշիացնելը հատուկ անոթներով:  
Այդ անոթներն իրենցից ներկայացնում են մետաղյա լեր-  
կարածև ամաններ, վորոնց կախ են տալիս սավառնակի  
թևերի կամ մարմնի տակ: Այդ ամանները սովորաբար լըց-  
նում են իպրիտով: Պահանջված ըոպելչին թ՛ն անոթից,  
դուրս են թափվում խտացրած ուղի ճնշման ոգնությունը,  
կամ այլ միջոցներով, փոշիանում են, դառնում են  
մանրիկ կաթիլներ և անձևի պես ընկնում են գետին:  
Սովորական ումբակիրն այդպիսի անձրևով կարող ծած-  
կել մի քանի հեկտար տարածություն: Թ՛ն մառախուղը  
շատ վնասակար է թոքերի և աչքերի համար: Թ՛ն կաթիլ-  
ներով հողը վարակված է մնում մի քանի ժամ:

Բացի գրանից, սավառնակները կարող են նրանց  
վրա դրված հատուկ գործիքների միջոցով նետել մանր-  
ապակե անոթներ (ամպուլներ)՝ լցված թ՛ն: Յերբ բացում  
են այդ գործիքի հատակը, ամպուլներն ընկնում են գետին  
և փշրվում են, իսկ նրանց միջև թ՛ն շաղ է գալիս, հար-  
վածելով մարդկանց և վարակելով վայրը:

### ԹԵՄԱ 3. ԻՆՉՊԵՍ ՃԱՆԱՉԵԼ Թ՛Ն

Հակաքիմիական պաշտպանության անհրաժեշտ միջո-  
ցառումներն ու միջոցները ժամանակին կիրառելու հա-  
մար պետք է կարողանալ թ՛ն ճանաչել ողում, գետնի և  
զանազան առարկաների վրա նրանց հոտով, արտաքին:  
հատկանիշներով, նրանց զրգոխ ազդեցությունը և այլն

Իսկ լ՛նչպես ճանաչել զանազան տեսակի թ՛ն:

Իպրիտը դեղնավուն կամ գորշ գույնի յուղանման հե-  
ղուկ է: Նրա գոլորշիներն անգույն են: Հոտը թույլ է,  
անդուրեկան, հիշեցնում է սխտորի կամ մանանեխի հոտը:  
Ռումբի պայթյունը խուլ է, ձագարը փոքր է, բեկորները  
խոշոր են, ուռմբի մարմնի զգալի մասը պահպանվում է:  
Իպրիտի գոլորշիները հոտառություն և շնչառություն ու-  
զանների վրա զրգոխ ազդեցություն չեն գործում: Իպ-  
րիտի մուգ յուղանման կաթիլները կամ բծերը իպրիտի  
լավ զգացվող հոտով շատ պարզ նկատվում են տների պա-  
տերի, ասֆալտի, բուսականությունների վրա և այլն: Իպրիտի  
կաթիլներից ձյունն ստանում է դեղնավուն—գորշ գույն:  
Իպրիտի հեռակայական ուռմբերի պայթման ժամանակ չորս  
կողմն են թռչում մեծ քանակությամբ բեկորներ, ողում  
առաջանում են մուգ շերտեր՝ բաղկացած թ՛ն մանրիկ կա-  
թիլներից, վորոնք արագորեն նստում են գետնին: Իպ-  
րիտը սավառնակից փոշիացնելու ժամանակ սավառնակի  
պոչի տակ առաջանում է թ՛ն մի մուգ շերտ, վորը լավ  
լերևում է միքանի վայրկյանի ընթացքում:

Լյուիզիտը սուր հատ ունեցող գորշ գույնի հեղուկ է,  
վորը հիշեցնում է խորդենու տերևների հոտը: Լյուիզիտի  
գոլորշիները ներշնչելու դեպքում արագ սուր ծակոց է  
սկսվում աչքերի և քթի մեջ և կոկորդը զրգովում է:  
Լյուիզիտով վարակված բուսականությունը գորշ—կարմիր  
գույն է ստանում: Ավիացիան լյուիզիտը նործադրում  
է ճիշտ նույն լեղանակներով, ինչ և իպրիտը:

Փոսպենը մի անգույն գազ է՝ յուրահատուկ անախորժ  
հոտով: Յերբ ողում Փոսպենի քանակը քիչ է, նա ունենում  
է թույլ անախորժ հոտ, վորը հիշեցնում է փթած մրդի  
հոտը: Յերբ նրա քանակը շատ է, ունենում է սուր,  
զրգոխ հոտ: Փոսպենով լցված խոշոր ավիառումբի պայ-

Թելու դեպքում առաջանում է մի մեծ ծանրաշարժ ամպ, վորը դանդաղորեն շարժվում է քամու ուղղութիամբ:

Քլորայիլիինը ծանր դեղնավուն հեղուկ է՝ սուր գրգռիչ հոտով, վորը հիշեցնում է բաղլինջի (թախտաբիթիի) հոտը: Ամենից առաջ ներգործություն են գտում աչքերը, վորից սուր ցավ է առաջանում աչքի կուպերի մեջ և արցունք է հոսում: Քլորայիլիինի գործընթանն անգույն են:

Աղամսիսը կարծր նյութ է, վորը մուգ-կանաչավուն փոշու կամ դեղնա-կանաչավուն գույնի կտորների տեսք ունի, առանց հոտի կամ թույլ-սիրտ խառնող հոտով: Բեկորային-քիմիական ուսմբերի միջոցով ադամսիտի մարտական գործադրություն դեպքում առաջանում է մի վոչ մեծ, արագ ցնդող, մուգ-դեղնավուն կամ գորը գույնի ծուխ: Այդ ծուխը ներշնչելու դեպքում համարյա միանգամից քթի և կոկորդի մեջ զգացվում է ուժեղ զրզիռ, վորը հագ, փռշտոց և սրտախառնություն է առաջացնում:

Հակազարը հազած ժամանակ ԹՆ կտրելի յե նանայել հետևյալ ձևով. խորն արտաշնչել և այնուհետև գիմակի ռետինը ականջների մոտ մատներով փոքր ինչ բարձրացնել, զգուշութիամբ մի քիչ ներշնչել քթով: Բաց թողնելով գիմակի ռետինը՝ ուժեղ արտաշնչել, մասներով սեղմելով արտաշնչման կրպանը: Յեթե չհաջողվի միանգամից զգալ ԹՆ հոտը, նորից պետք է կրկնել ամբողջ գործողությունը:

ԹԵՄԱ 4 և 5. ԻՆՉ ՊԻՏՔ Ե ԱՆԵԼ ՈՂԱՅԻՆ ՅԵՎ ՔԻՄԻԱ-ԿԱՆ ՎՏԱՆԳԻ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐ ՏԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Ողային հարձակման մասին բնակչությունը նախազգուշացվում է «ողային տագնապ» (ՈՏ) ազդանշանով բազաբի վրա հակառակորդի սավառնակի հայտնվելուց 15

—20 րոպե առաջ: Ազդանշանը տրվում է գործարանային և յերկաթուղային շշակների, շեփորների, (սիրենների) ընդհանավող սուլոցներով, ռադիոյի և հեռախոսի միջոցով և այլ առաջուց պայմանավորված յեղանակներով, վորոնց մասին պետք է զիտենա շրջանի վողջ բնակչութունը:

Ողային տագնապ (ՈՏ) ազդանշանով ՀՈՔՊ—ի խմբակների կազմի մեջ մտնող բոլոր անձինք պետք է ներկայանան իրենց հավաքակայանները: Ինքնապաշտպանություն խմբակների կազմի մեջ մտնող բոլոր անձինք ներկայանում են իրենց խմբակների հավաքակայանները, յեթե ՈՏ ազդանշանն այդ անձինք լսում են տանը կամ մոտակայքում: Չեռնարկություններում, յերկաթուղիներում, ելեկտարկայաններում աշխատանքը չի ընդհատվում. բանվորներն ու ծառայողները, բացառությունամբ ՀՈՔՊ—ի խմբակների կազմի մեջ մտնողներից, մնում են իրենց տեղերում և շարունակում են աշխատանքը: Առևտրական ձեռնարկությունները, ճաշարանները ընդհատում են իրենց աշխատանքը և միջոցներ են ձեռնարկում պահպանելու պարենը, խարը և այլ ապրանքները ԹՆ ներգործությունից. հաճախորդները մնում են այդ շենքերում մինչև ավարտ («ողային տագնապն անցավ») ազդանշանի տրվելը կամ տեղափոխվում են մոտակա ապաստարանները: Կուլտուր—լուսավորական հիմնարկությունները՝ թատրոնները, կինոները և այլն դադարեցնում են իրենց գործունեությունը. հանդիսականները տեղավորվում են ազատ շենքերում՝ համաձայն արմինիստրացիայի ցուցումների: Կրթական հիմնարկները և այն տեսակի հիմնարկներ, բացի նրանցից, վորոնք մասնակցում են բնակավայրի ՀՈՔ—ի սխտեմում, դադարեցնում են իրենց աշխատանքը: Դասատուները, ծառայողները, աշակերտները և այլն մնում են այդ հիմնարկ-

ների և ձեռնարկները շենքերում: Փողոցի տրանսպորտի (տրամվայ, ավտոբուսներ և այլն) շարժումը մասնակիորեն դադարում է. տրանսպորտային միջոցները և նրանց մեջ գտնվող ուղևորները թափնվում են կամ ոգտագործվում են ՀՈՊ—ի ծառայութան համար, համաձայն ՀՈՊ—ի հերթապահ մարմինների և միլիցիայի ցուցումների: Այն քաղաքացիները, վորոնք ՈՏ ազդանշանի ժամանակ տանն են լինում, անմիջապես հանգցնում են վառարանները և բուխարիները (պլիտաները), պրիմուսները և նավթե վառարանները (կերոսինականները), փակում են բոլոր ծխնելուղները, ոգանցքները, պատուհանները, դռները, գազածորակները: Յեթե տան մեջ կա հակաքիմիական տեսակետից սարքավորված սենյակ, ապա այնտեղ են ուղարկում յերեխաներին և հիվանդներին: Գիշեր ժամանակ պետք է անհապաղ լույսը հանգցնել կամ պատուհանները միջնեցնել անթափանց վարագույրներով կամ փեղկերով: Պարենը ծածկել արկղներում և ամաններում: Հագուստեղենը, սպիտակեղենը, ամանեղենը պահել պահարաններում, սնդուկներում և այլն: Բոլոր զեպքերում ձեռքի տակ ունեցած հակազագերը դրվում են «պատրաստի» դրության մեջ: Անպայմանորեն պետք է հանգստություն պահպանել, ամեն կերպ պայքարել իրարանցման, շփոթվածության և խուճապի դեմ:

Ի՞նչ պետք է անել «քիմիական վտանգ» ազդանշանի դեպքում

Ողալին հակառակորդի կողմից քիմիական միջոցներ գործադրելու դեպքում հատուկ պոստերը տալիս են «քիմիական վտանգ» ազդանշանը (ձեռքի շեփոռների, սիրենների, սուլոցների, հաճախակի հարվածներ ու լսի կտորներին, զանգերի ղողանջ): Այս ազդանշանը ցույց է

տալիս, վոր այն տեղամասը, վորտեղից տրվում է ազդանշանը, լենթարկվել է քիմիական հարձակման և վարակված է: Առանց հակազագի և պաշտպանական հագուստի այդտեղ մնալը վտանգավոր է կյանքի համար:

«Քիմիական վտանգ» ազդանշանի դեպքում պետք է անմիջապես հակազագը հագնել և չհանել մինչև հիմնարկի, տան ադմինիստրացիայից կամ ՀՈՊ—ի ծառայութան կազմին պատկանող անձնավորությունից ցուցումներ ստանալը: Յեթե ազդանշանը լսել ես փողոցում և հակազագը մոտդ չի, ապա պահիր շնչառությունդ, փակիր բերանդ և քիթդ թաշկինակով, փեշով կամ թեփքով և արագ մտիւր մոտակա տունը. այնտեղ ցույց կտան, թե վորտեղ պետք է թափնվել:

Ի՞նչ պետք է անել հագուստի կամ մարմնի վրա ԹՆ կաթիլներ կամ բծեր հայտարելու դեպքում

Կասկածելի հոտ առնելու դեպքում թեկուզ և մինչև «քիմիական վտանգ» ազդանշանը պետք է անմիջապես հակազագը հագնել և հեռանալ այդ տեղից: Հագուստի, կոշիկի և մարմնի վրա ԹՆ կաթիլներ կամ բծեր հայտարելիս պետք է անմիջապես, առանց քսման, բամբակով կամ լաթով հեռացնել ԹՆ: Յեթե ձեռքի տակ ջուր կա, լվանալ թունավորված տեղը: Առաջին հնարավորության դեպքում ուղևորվել զեպի առաջին ոգնության կամ սանիտարական մշակման կայանը (ամեն մի միլիցոններ, դռնապան կարող է ցույց տալ այդ կայանի տեղը): Մոտ չբնալ այն տեղերին, վորտեղ դրված են զեղին ցուցիչներ կամ զեղին լապտերներ «վարակված ե» մակագրությամբ և վորտեղ զեղին դրոշակիկներով լարան է անցկացված: Այդ ցուցիչներն ու դրոշակիկները ցույց են տալիս, վոր այդ վայրը վարակված է ԹՆ:

Ի՞նչ պե՛տք է անել հրդեհից յե՛վ ողայի՛ն հարձակումից տու-  
ժածներ ունենալու դեպքում

Հրդեհ ծագելու դեպքում պետք է անմիջապես տե-  
ղեկացնել մոտակա հրշեջ խմբին և լեթե տուժածներ կան՝  
բժշկական կայանին: Յուրաքանչյուր աշխատավոր պետք  
է իր ծոցատետրում գրած ունենա մոտավոր հրշեջ խմբի,  
բժշկական կայանի, միլիցիայի և ՀՈՒՔՊ—ի քաղաքամասի  
հեռախոսի համարները և հնարավորության սահմաններում  
հիշի հեռախոսի համարները: Մինչև հրշեջ խմբի կամ  
սանիտարների գալը պետք է իրենք հնարավոր միջոցները  
ձեռք առնեն հրդեհը հանգցնելու, տուժածներին անհե-  
տաձգելի ոգնություն ցույց տալու համար և այլն:

Յերբ ՀՈՒՔՊ—ի տեղական մարմինները կհամոզվեն,  
վոր հակառակորդի սավառնակներն արդեն հեռացել են,  
տրվում է « ավարտ » ազդանշանը գործարանային շշակ-  
ների լերկարածիք սուլոցներով, նույնպես և ռադիոյի և  
հեռախոսի միջոցով:

ՅԵՐԿՐՈՐԴ ՆՈՐԱ

### ՀԱԿԱՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ 6. ԲԵ ԵՆ ՀՍԿԱԳԱԶԻ ՆՇԱՆԱԿՈՒՄՆ ՈՒ ԿԱԶ-  
ՄՈՒԹՅՈՒՆԸ

Մարտական թունավորող նույթերից անձնապես պաշտ-  
պանվելու հիմնական միջոցը հակագազն է: Նա թ՛ն ներ-  
գործությունից պաշտպանում է շնչառության օրգանները,  
աչքերն ու դեմքի մաշկը:

ԲԵ ԵՆ հակագազը բաղկացած է հետևյալ մասերից.

Հակագազային տուփից՝ կլանիչով, պտուտակավոր  
փողակից և ներշնչման կլապանով: Կլանիչը բաղկացած

է հատուկ լեղամակով մշակած փայտածուխից («ակտի-  
վացրած» ածուխ), մի քանի այլ նյութերից և բամբա-  
կից: Կլանիչի նշանակումն է թունավոր նյութերից զտել  
այն ողը, վորը շնչում է հակագազից ոգավող մարդը:

Տուփի ստորին կափարիչի կլոր անցքի մեջ մտցրած  
է մետաղյա խցան՝ կտրուներով: Խցանի գամիկի վրա  
հազցված է ռետինե բոլորակ: Դա ներճնչման կլապանն  
է: Ներշնչելիս կլապանը փոքր ինչ բարձրանում է և դրսի  
ողը ներս է մտնում տուփի մեջ, իսկ արտաշնչելիս՝  
պինդ փակում է խցանի կտրուները և թույլ չի տալիս,  
վոր արտաշնչած ողը չես դառնա տուփի միջով: Արտա-  
շնչած ողը դուրս է գալիս հատուկ՝ արճաճնչման կլա-  
պանի միջով:

Հակագազի տուփի վերին կափարիչն ունի փողակ,  
վորի վրա ամրանում կամ պտուտակվում է միացնող ռե-  
սինի խողովակը:

Յեռածուկ խողովակը ծառայում է կորդակ դիմակը  
ռետինի խողովակի հետ միացնելու և արտաշնչման կլա-  
պանն ամրացնելու համար:

Արճաճնչման կլապանը հակագազի ամենանուրը, հեշտ  
վնասվող, մասն է: Կլապանը մի տափակ ռետինի պարկ  
է. ստորին մասում այդ պարկն ունի լերկու անցք, վորոնց  
միջով դուրս է գալիս արտաշնչած ողը:

Ներշնչման ժամանակ կլապանի պատերը ներս ընկ-  
նելով, պինդ կաշում են միմյանց և փակում են արտա-  
քին թունավորված ողի մուտքը դեպի կորդակ դիմակը:  
Վնասվածքներից պաշտպանելու համար արտաշնչման  
կլապանը պարփակված է մետաղե շրջանակի մեջ:

Կորդակ դիմակը պատրաստվում է չորս չափսի:  
Կորդակը ռետինից է, ունի ապակյա ակնոցներ դրված  
մետաղյա շրջանակների մեջ ունի նաև մեկ մատնանման

պտուկ, վորը ծառայում է ակնոցները մաքրելու համար, չերբ նրանք քրտնում են:

Պայուսակը ծառայում է հակազգը կրելու և պահելու համար. պատրաստվում է բրեզենդից կամ մի այլ ամուր կտորից (չերբեմն փոխարինվում է հատուկ հարմարանքով՝ կարված կտորե փոկերից): Պայուսակն ունի չերկու բաժանմունք, մեծը՝ չերկաթալարի նեցուկով՝ հակազգի տուփի համար է, իսկ փոքրը՝ կորդակ զիմակի համար է: Մեծ բաժանմունքում զսպանակը ապահովում է ողի ազատ մուտքը դեպի հակազգի ներքևի մասը՝ առանց տուփը պայուսակից դուրս հենելու:

Նոր հակազգ ստանալու ժամանակ պետք է տուփը պայուսակից հանել, պոկել խցանը փակող կարտոնե բուրակը և չետ պտուտակելով հանել վերևի փողակի մետաղե թասակը: Դրանից հետո միացնող խողովակը պտուտակել տուփի փողակին:

Հակազգը դուրբբեկ գործիք է, վորը խիստ հոգատար վերաբերմունք է պահանջում, հակառակ դեպքում նա փչանում է և դադարում է ԹՆ պաշտպանելուց: Հակազգը չի կարելի պահել խիստ տաքացած տեղերում (վառարաններին, շոգու շեռուցման խողովակներին մոտիկ) կամ չի կարելի ձմեռ դնել չըտաքացվող շենքերում: Շատ վնասակար է խոնավությունը: Յեթի հակազգը ընկել է անձրեվի տակ, ապա անհրաժեշտ է հանել պայուսակից, խնամքով սրբել և չորացնել պայուսակից անջատած: Ոգտվելուց հետո խնամքով սրբել կորդակի ներսի կողմը և չեռածունկ խողովակի այն ներքին ծայրերը, վորոնց վրա ամրացված են կորդակ զիմակը և արտաշնչման կլապանը: Վոչ մի դեպքում պայուսակի մեջ չի կարելի կողմնակի առարկաներ դնել:

Հակազգ կրելու չերեք դրուժյուն կա 1) «չերթային», 2) «պատրաստի» և 3) «մարտական»:

Յերթային դրությամբ հակազգը կրում են այն ժամանակ, չերբ հակառակորդի քիմիական հարձակման վտանգ չկա: Այս դրուժյան մեջ պայուսակը հակազգի հետ պետք է լինի ձախ կողքին, փոկը պետք է ձգված լինի աջ ուսի վրայից: Պայուսակի վերին չեզը պետք է լինի գոտկի բարձրություն վրա: Պայուսակի կլապանը պետք է կոճկված լինի: Թեյը պետք է անցկացնել ձախ ողակի միջով, փաթաթել և տեղավորել պայուսակի մեջ: Պայուսակի փոկի վրայից կարելի չէ հագնել զինասարքը, հրացանը, կոլոլը (սկատկան), իրերի տոպրակը և այլն, բայց չի կարելի հակազգը կրել թիկնոցի, գրատի (շիճնելի) և վերարկույի տակից, վորովհետև այդ դեպքում հակազգի հագնելը շատ դժվար կլինի և շատ ժամանակ կպահանջի:

«Պատրաստի» դրությամբ հակազգը կրում են այն ժամանակ, չերբ սպասվում է քիմիական հարձակում և կամ չերբ այդ հարձակման վտանգը հավանական է ամենամոտիկ ժամանակում: «Պատրաստի» դրուժյան մեջ պայուսակի կլապանը բացված է, գլխարկը պատրաստված է արագ հանելու (կզակն ազատված է գլխարկի փոկից, կապերից, ականջնոցներից և այլն), թեյը հանված է պայուսակից, արձակված է, մարմնի շուրջը և պինդ կապված է աջ ողակից այնպես, վոր հակազգը չըկարողանա շարժվել կողքի վրա, չերբ մարդ քայլելիս լինի:

«Մարտական» դրությամբ հակազգ կրում են գետնի վրա կամ շրջապատող ոգում ԹՆ հայտաբերելու բոլոր դեպքերում: Հակազգը «մարտական» դրուժյան է դրվում

կատկածելի հոտ հայտաբերելու պես և «քիմիական ասագ-նապի» ազդանշանի դեպքում: Մարտական դրուժյամբ կորզակ դիմակը հագցրած ե լինում գլխին, իսկ գլխարկը՝ դիմակի վրայից: Մնացածը նույնն է, ինչվոր «պատրաստի» դրուժյան ժամանակ:

Հակազգազը «մարտական» դրուժյունն փոխելու համար հարկավոր է պահել շնչառությունը և ազատել ձեռքերը: Դիմակը հագնելու համար պետք է բուժ մատներով բռնել լենթածնոտային մասի հաստ լեզրի դրսից, իսկ մյուս մատներով՝ ներսից: Դիմակը մոտեցնել դեմքին, առաջ տալ ծնոտը և մտցնել դիմակի մեջ և մատները դիմակի լեզրերով շարժելով ներքևից վերև բուժ մատով և ցուցամատով բարձրացնել գլխարկը (շգոցիկից բռնած): Շարունակելով գլխարկը մատներով պահել գլխի վրա, դիմակը քաշել գլխին և հագնել գլխարկը: Չախ ձեռքի բուժ մատով սեղմել արտաշնչման կլապանը, իսկ աջ ձեռքի մատներով սեղմել միացնող խողովակը լեռաբերան փողակի մոտ և ուժեղ կերպով արտաշնչել:

Հակազգազը հագած պետք է շնչել համաչափ և սակավ, բայց խոր կերպով. պետք է շնչել քթով:

Հակազգազը պետք է հանել ազդանշանով կամ «հանել հակազգազը» հրամանով, հետևյալ կերպ: Ազատել ձեռքերը. ձախ ձեռքը դնել լեռաբերան փողակի վրա աջնպես, վոր բուժ մատը և ցուցամատը կարողանան բռնել նաև դիմակի կողորդակը: Աջ ձեռքով բարձրացնել գլխարկը, իսկ ձախ ձեռքը լեռաբերան փողակի հետ միասին տալ առաջ ու վերև, աջնպես, վոր ծնոտն ազատվի դիմակից և ապա դիմակը հանել գլխից: Ծածկել գլխարկը: Դիմակը շուռ տալ, լավ ցամաքացնել նրա ներսի մասը, ակնոցները շրջանակները և լեռաբերան փողակի վերին հավելամասը, վորից հետո դիմակը վորոշ ժամանակ թողնել բաց վի-

ձակում, վոր վերջնականապես ցամաքի (ձմեռ ժամանակ դնել կոնատակին): Աջ ձեռքով դիմակը բռնել ակնոցներից, իսկ ձախ ձեռքով վերին հաստ լեզրից: Դիմակի հավելվածը պետք է լինի աջ ձեռքի կողմը (դիմակի պատերը ծալված են, մատնանման հավելվածը տեղավորված է դիմակի ներսում): Ծալել դիմակը լեռկայնությամբ, ծածկելով աջ ապակին և լայնությամբ՝ ծածկելով ձախ ապակին լեռաբերան փողակի մոտ՝ դեպի լեզրը: Չախ ձեռքով միացնող (ծալազարդ) խողովակը դնել պաշուսակի փոքր բաժանմունքը, մինչև հատակին հասնելը, իսկ աջ ձեռքով նրա վրայից դնել լեռածունկ փողակը՝ դիմակի հետ միասին (արտաշնչման կլապանն ուղղել դեպի ձախ, հակազգազի լենթածնոտային մասը գտնվում է վերևում):

#### ԹԵՄԱ 8. ՀԱՍՍԻՐԱԿ ԳԱԶԱՊԱՍՏԱՐԱՆԻ ՍՍԻՔԱՎՈՐՈՒՄԸ.

Գազապատարանի համար ընտրում են սակավ դուռ և պատուհան ունեցող սենյակ, ամուր պատերով և ծածկով:

Ապատարանն արտաքին ողի համար անթափանց դարձնելու համար պետք է հատակի, պատուհանների, դռների պատերի և առաստաղի բոլոր ձեղքերը ծածկել (ծեփել) մածիկով (գամասկայով), լուղաներկով: Ամուր փակել վառարանների կապարիչները և դռնակները ձյուլթի մեջ խիստ մահուղի կտորներով կամ ֆլանելով: Դռների բացվածքների կողերից մխել թաղիք, մահուղի զուլեր, ավտոմոբիլի հին կամերայի ուստին: Վերջնականապես կալնել ավելորդ դռներն ու պատուհանները: Պատուհանների ապակիներին լրագրի թուղթ փակցնել (խաչաձևող շերտերով), վորպեսզի ուումբի պայթման դեպքում ողի ցնցումից ապակիները չփշրվեն: Պատուհանների համար պինդ փակվող փեղկեր պատրաստել:

Այս ձևով սարքավորված սենյակն անթափանցելի չե-  
արտաքին ողի, հետեվաբար և ԹՆ համար, վորպիսին  
գտնվում է ողի մեջ: Սակայն պետք է նկատի ունենալ,  
վոր արտաքին ողը մուտք չի ունենա և ապաստարանից  
ոգտվող մարդիկ պետք է շնչեն միայն այն ողը, վորը  
կա ներսում: Այդ ողը պետք է մաքուր լինի և այնպիսի  
քանակությամբ, վոր բավականացնի ապաստարանից ոգտ-  
վելու ամբողջ ժամանակվա ընթացքում (մեկ մարդու հա-  
մար մեկ ժամում պահանջվում է յերկու խորանարդ մետր  
ող): Ողը մաքուր պահելու և խնայողաբար ծախսելու հա-  
մար անհրաժեշտ է, վոր վոչ մի այլ իր, բացի յերեխա-  
ների սնունդից և հիվանդների դեղորայքից, ներս չըտարվի  
ապաստարան: Չծխել և պրիմուս կամ նաֆթավառ (կերո-  
սինկա) չվառել: Յեթե ելեկտրական լուսավորություն չկա,  
ամեն մի սենյակում վառել վոչ ավելի, քան մեկ մոմ կամ  
փոքր ճրագ: Խուսափել ամեն տեսակի ավելորդ շարժում-  
ներից, չաղմկել:

**ԹԵՄԱ 9. ԻՆՉՊԵՍ ԴՈՒՐՍ ԳԱԼ ՎԱՐԱԿՎԱԾ ՎԱՅՐԻՑ**

Սպառնալից գոտում ապրող ամբողջ քաղաքացիական  
բնակչությանը հնարավոր չե հայթայթել հատուկ պաշտ-  
պանական հագուստ, վորը պաշտպանում է կայուն թու-  
նավոր նյութերի (ԿԹՆ) մաշկա-պալարական ներգործու-  
թյունից: Այդպիսի հագուստ, իբրև կանոն կունենան  
միայն գորգերը և ՀՈՊ-ի ծառայությունը տանող խմբերը:  
Մնացած բնակչությունն անհրաժեշտության դեպքում  
ստիպված կլինի ԿԹՆ վարակված շրջանից դուրս գալ,  
ոգտվելով բոլոր մատչելի միջոցներից, վորպեսզի խու-  
սափի վարակված գետնին, առարկաներին և այլն, շփվե-  
լուց: Ուստի, բոլոր դեպքերում, յերբ այդ թույլ են տա-

լիս հանգամանքները, պետք է շրջանցել վարակված տե-  
ղամասերը, պետք է փովածքների ոգնությունը անցքեր  
բանալ այդպիսի տեղերում, և առանձին դեպքերում պետք  
է այդ անցքերը գազահանել: Անցքերի փովածքները և  
գազահանումը, իբրև կանոն կրկատարեն ՀՈՊ-ի քիմ-  
խմբերը և ինքնապաշտպանություն խմբակների քիմո-  
ղակները: Փովածքների համար կարելի չե ոգտագործել  
վառելափայտը, նրա վրա տակտակներ շարելով, պար-  
զապես կարելի չե ոգտագործել գերաններ, շպալներ,  
Ֆաներկալի կտորներ՝ շավիղի ձեվով շարելով: կարելի չե,  
շող տալ ավազ, հող և այլ նյութեր \* ձմեռ ժամանակ  
կարելի չե շող տալ ձյուն:

Վարակված շրջաններից դուրս գալու գործը կազմա-  
կերպում են քիմխմբակները և քիմողակները: Մնացած  
քաղաքացիները պետք է անառարկելիորեն կատարեն  
նրանց բոլոր կարգադրություններն ու ցուցումները:

Ամեն քաղաքացի պետք է ձեռք առնի հետեվյալ  
անձնական նախազգուշական միջոցները. պետք է հագնի  
կրկնակոշիկներ, յեթե կրկնակոշիկ չունի, կոշիկները  
պետք է փաթաթի լաթերով, վոտնատակերին կապի տախ-  
տակներ: Սովորական հագուստի վրայից պետք է հագնի  
յեկրորդ ձեռք հագուստ կամ նրա առանձին մասերը: Թեվ-  
քերի ծայրերը և շավառի տոտերը պետք է պինդ կա-  
պել թելերով: ոձիքը պետք է կոճկել, վիզը փաթաթել  
շարֆով, սրբիչով, ձեռքի թաթերը պաշտպանել հաստ  
ձեռնոցներով: Կանանց և յերեխաներին հանձնարարվում է  
վոտները պաշտպանել մի քանի գույգ գուլպաներով, ծնկ-  
ներից վերև՝ հաստ արիկոյով, ամուր կապելով ծնկների  
մոտ: Հագնել հակագազը, իսկ յեթե հակագազ չկա՝ շնչել  
բերնին և քթին կպցրած մի քանի ծալ ծալած թաշկի-

նակի կամ բարձր լեռեսի միջով, նախապես թաշկինակը ջրում թրջելով և փոքր ինչ մզելով:

Վարակված տեղամասով շարժվելիս խստորեն պահպանել այն հերթը, ուղղությունը և հեռակալությունները, վոր ցույց են տալիս վարակված շրջանից դուրս գալու գործը կազմակերպող անձինք, շարժվել առանց ուշանալու, արագ, բաց վոչ վազելով. դուրս չբզալ այն շերտի սահմաններից, վորը նշանակված է խափանիչ նշաններով: Հետևել, վորը հագուստը չդիպչի շենքերի պատերին, թփերին, խոտին և այլն: Վոչ մի իր գետնից չբարձրացնել: Դուրս գալով վարակված տեղամասից, հանել հակազարկ և վտաններին փաթաթած լաթերը այն անձանց ցուցումներով, վորոնք ղեկավարում են լեյունուսը վարակված տեղամասից և լենթարկվել սանիտարական մշակման:

**ԹԵՄԱ 10. ԿԵՆՍԱՄԹԵՐԻԻ, ԶՐԻ ՅԵՎ ԱՅԼ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԹՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ**

Յեթե սննդեղենը վարակվելու լինի անկալուն թունավոր նյութերով, որինակ՝ ֆոսգենով, դիֆոսգենով և ԿԹՆ գոլորշիներով, ապա կարելի չէ սննդեղենը անվնաս դարձնել, թողնելով քամու տակ, մինչև վոր հոտն անցնի, կամ 3—4 ժամ լեռացնելով ջրի մեջ:

ԿԹՆ մառախուղով վարակված ուտելիքներ, պահանջում է լեռկարատե ողափոխություն՝ նույնպես, մինչև վոր ԹՆ հոտն անցնի, և ապա կարելի չէ լեռել, տապակել, թխել կամ անվնաս դարձնել հատուկ լեղանակներով: ԿԹՆ կաթիլներով վարակված սննդամթերքի մեծ մասը չի կարելի անվնաս դարձնել առանց գործադրելու գազահանման բարդ լեղանակներ: Այդ պատճառով գործնականորեն այն սննդամթերքը, վորը վարակված է ԿԹՆ կաթիլներով,

գործածության համար անպետք է վտանգավոր է: Այն պես է վոչնչացնել: Հեղուկ ԹՆ կաթիլներով վարակված ջուրն անպետք է խմելու, կերակրի, լվացվելու և լվացքի համար:

Ինչպես պետք է սննդամթերքն ու ջուրը պահպանել վարակումից:—Ոգտագործել հերմետիկորեն փակվող մետաղե և ապակե ամաններ (բիդոններ) բանկաներ, շշեր, տերմոսներ և այլն). խցանները փաթաթել պերգամենտի, ձեթած, յուղած և ձյութած թղթով. մթերքները պահել ռետինի կամ մի քանի շերտ պերգամենտի, ձեթած թղթով պատած ամաններում կամ փայտե աբրայի (տարայի) մեջ (արկղներում), վոր ձեղք չունի և ունի ամուր փակվող կափարիչներ:

Չբացված կոնսերվները լիովին ապահովված են ԿԹՆ վարակումից, սակայն կոնսերվի այն բանկաները, վորոնց վրա ԹՆ կաթիլներ են ընկել, պետք է դրսի կողմից գազահանել, տրորելով լաթով (սկզբում լաթը պետք է թաթախել կերոսինի կամ բենզինի մեջ, ապա չոր լաթով), իսկ հետո պետք է բանկաները մաքուր ջրում լեռացնել մեկ ժամվա ընթացքում: Այլ տեսակի ամանների մեջ պահված և վարակման լենթարկված մթերքները պետք է զգուշութամբ հանել և հեռացնել նրանց վերին շերտը: Փայտե և կարտոնե ամանեղենը պետք է վոչնչացնել (ալբել), իսկ մետաղե և ապակե ամանները լեռացնել այնպես ինչպես կոնսերվի բանկաները: Վարակված շշերի և ջրամանների ջրից ոգտվելու դեպքում պետք է դրանց դրսի լեռեսն անվնաս դարձնել, լավ լվանալ և սրբել ապակե խցանները, փայտե և կարտոնե խցանները պետք է վոչնչացնել: Գազահանման ժամանակ գործադրված լաթերը այրել, իսկ վարակված ամանեղենը լեռացնելու համար գործածած ջուրը զգուշութամբ լցնել կոյուղում հոսանք-

ների մեջ: Տնային իրերը պետք է պահել արկղների, սնդուկների, պահարանների մեջ, վորոնք կողպեքներ ունեն և կարող են ողի համար անթափանց ձևով փակվել:

Առաջին հերթին ողային տազնապ ազդանշանով պետք է ծածկել այն ամանները, վորոնք ծառայում են կերակուր պատրաստելու և գործածելու համար, հազուստեղենը, կոշկեղենը և սպիտակեղենը: Խոշոր իրերը (որինակ՝ փափուկ կահկարասիքը, բարձերը), վորոնք դժվարութեամբ են գազահանվում, անհրաժեշտ է ծածկել հաստ թղթով ճիւղփով և ձեռքի տակ չեղած այլ կտորներով:

### ԹԵՄԱ 11. ԿԹՆ ԳԱԶԱՀԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Գազահանում կոչվում են՝ ԹՆ վարակված կառուցումները, վայրը, ողը, շենքերը, զանազան իրերը, հազուստեղենը մաշկը և այլն անվնաս դարձնելու վերաբերյալ ձեռք առած բոլոր միջոցառումները:

Գազահանման աշխատանքների ծամանակ գործադրվում են հետևյալ հիմնական նյութերը.

Քլորակիր (չոր կամ շաղախի ձևով, այսինքն՝ քլորակրի փոշին ջրով խառնած). կալցիումի հիպոքլորիտ, վորն արտաքուստ նույն քլորակիրն է, բայց քլորի ավելի մեծ պարունակութեամբ. մանգանաթթվուտային կալիում, քլորամին, նատրիումի հիպոքլորիտ և այլն: Այս բոլոր նյութերի լուծույթները գործ են անվում ԿԹՆ վարակված մարդու մաշկի և արժեքավոր մետաղե առարկաների գազահանման համար: Յեռացող շուրը գործ է անվում բամբակեղեն, բրդեղեն և այլ գործվածքների գազահանման համար: Գոլորշին գործ է անվում կոպիտ բրդից հազուստեղենն ու մետաղե իրերը ԿԹՆ գազահանելու համար: Տաք ողը լավ միջոց է կայուն թունավոր նյութերով վարակված

հազուստը գազահանելու համար: Զանազան այրվող նյութեր՝ նավթը, կերոսինը, բենզինը, ծառայում են փոքր տեղամասերը, կառուցվածքների առանձին մասերը և այլն անվնաս դարձնելու համար: ԿԹՆ լուծիչներն անվնաս չեն դարձնում ԿԹՆ, այլ միայն լուծում են նրանց և այդպիսով ԹՆ հանում և հեռացնում են վարակված առարկաներից: Լուծիչները գործ են անվում մարդու մաշկը և մետաղե իրերը գազահանելու համար: Իպրիտի լավ լուծիչներ են հանդիսանում չորսքլորային ածխածինը, սկիպիդաբը, ացետոնը, լեթերը, սպիրտը, բենզինը, կերոսինը, նավթը:

ԿԹՆ վարակված վայրի գազահանման համար գործադրվող գործիքները.

Տրակսոռային կցան—Ա.ԴՏ դեգազատոր. ծառայում է խոշոր տեղամասերի գազահանման համար:

Ձիու կցան—Կ.Դ.Պ դեգազատոր. ծառայում է նույն նպատակի համար, ինչ և Ա.ԴՏ:

Ձեռքի գազահանման սայլակ—Վ.ԴՏ—1. ծառայում է վոչ մեծ հարթ տեղամասեր գազահանելու համար:

Ձեռքի գազահանման գործիք՝ Ռ.Դ.Պ—1. ծառայում է մետաղե առարկաներ և առանձին փոքր տեղամասեր կամ կառուցվածքներ լուծիչներով գազահանելու համար:

Մաղ—պատգարակ. գործ է անվում քլորակրով փոքր հարթ տեղամասեր գազահանելու համար, ինչպես նաև Վ.Դ.Պ, Ա.ԴՏ և Կ.Դ.Պ գործիքներով գազահանելու ժամանակ բաց թողած տեղերը գազահանելու համար:

Կրակային գործիք. ծառայում է վարակված փոքր տեղամասեր գազահանելու համար վարակված շերտը կիզելու ձևով:

Առձեռն միջոցներ, վոր ոգտագործվում են վայրի և կառուցվածքների գազահանման համար: Չոր քլորակրով

վայրը գազահանելու համար կարելի չե ոգտագործել վո-  
րոշ գլուղատնտեսական մեքենաներ (կիր ցանող և պարար-  
տանյութ ցանող շարքացաններ): Բացի դրանից, քլորա-  
կիրը կարելի չե շաղ տալ սովորական բահերի ոգնու-  
թյամբ: Քլորակիր շաղախով կառուցվածքների գազահան-  
ման համար կարելի չե ոգտագործել դուլլեր, ներկարարա-  
կան և ճիլոպե վրձիչներ և այլն: Հեղուկ լուծիչներով  
կարելի չե գազահանել զանազան տեսակի այգեգործա-  
կան և բանջարանոցային շաղացաններ, ջրցաններ, փո-  
ղոց ջրելու ավտոցիստերններ, ներկացան գործիքներ,  
վերջապես՝ կարելի չե ոգտագործել ավելներն ու դուլլերը:  
Այրվող հեղուկներ ցանելու համար կարելի չե ոգտագոր-  
ծել նույն ավտոցիստերնները, այգեգործական ջրցանները  
և այլն:

Գազահանման կամեքաները ծառայում են տաք ոգով  
և գոլորշիով հագուստը, տնային իրերը և զանազան  
ապարատներ (հեռախոսներ, շարժիչներ և այլն) գազա-  
հանելու համար: Իբրև այդպիսի կամեքաներ կարելի չե  
հարմարեցնել բաղնիքների շոգեկաթսային բաժանմունք-  
ները:

Գազահանման կաթսաները ծառայում են բամբակե-  
ղեն գործվածքների, նույնպես և ուտիսե առարկաների  
գազահանման համար (ջրում լեռացնելու միջոցով):

Վայրն անվնաս դարձնելու համար պետք է ցանել  
չոր քլորակիր. ցանելու միջին նորման 400 գրամ է մեկ  
քառակուսի մետրի համար, կամ թե բահերով պետք է  
կտրել հանել վարակված շերտը (5-8 սանտիմետր):  
Թփուտներով կամ բարձր խոտով ծածկված վայրը գազա-  
հանում են կրակային լեղանակով կամ քլորակիր են ցա-  
նում, նախապես հնձելով, կտրատելով կամ կրակով վոչըն-  
չացնելով բուսականությունը: Ջյունի ծածկվածքը գա-

զահանում են՝ փայտի թիերով հանելով ձյունի վարակ-  
ված շերտը: Կթն լցված ավիառումբերի պայթման տե-  
ղում առաջացած ձագարները (փոսերը) գազահանում են՝  
նրանց լցնելով քլորակիր խառնած հողով (3-4 կիրոգ-  
րամ ամեն՝ մի ձագարին):

Մետաղե իրերի վրայից պետք է քսուքը (յուղը) հե-  
ռացնել գազահանումից առաջ, տրորելով աջնքան, մինչև  
վոր չորանան: Կոպիտ մետաղե իրերը (ուսերը, ճախ-  
րակի ակները և այլն) գազահանում են կրակային լեղանակով  
կամ քլորակիր շաղախով և վերջում լվանում են ջրով:  
Դագդահները, զանազան մեքենաներ գազահանում են հե-  
ղուկ լուծիչներով: Մանր մետաղե իրերը և գործիքները  
կամ լեռացնում են ջրում (1 ժամ ) կամ լվանում են  
մանզանաթփուտային կալիումի, քլորամինի լուծույթ-  
ներում և սովորական լուծիչներում: Գազահանումից հետո  
լավ տրորում չորացնում են:

Կոպիտ բրդեղեն գործվածքները գազահանում են  
տաք ոգի (120 աստիճան) հոսանքով 4 ժամվա ընթաց-  
քու: Մորթեղենն ու կաշիները՝ տաք ոգի (60 աստիճա-  
նից վոչ բարձր) հոսանքով 8 ժամվա ընթացքում: Բամ-  
բակեղենը ջրի մեջ լեռացնում են մեկ ժամվա ընթացքում  
կամ գազահանում են գոլորշիով (2-4 ժամ): Ռետինե կո-  
շիկները, ձեռնոցները, հակազգի դիմակները և միացնող  
խողովակները, հագուստեղենը, սփռոցները, վարագույրնե-  
րը և այլն, ջրում լեռացնում են 2,5 ժամվա ընթացքում:  
Վարակված ներքնակները բարձերն ու բալիչները վոչըն-  
չացնում են կամ հանձնում են հատուկ գազահանման  
կամեքաների՝ գազահանման համար: Գորգերն ու գորգա-  
նման սփռոցները քամուն են տալիս և տաքացնում են  
արևի տակ, մինչև վոր հոտն անհետանա, կամ տաքաց-  
նում են տաք ոգով (60 աստիճանից վոչ ավելի ): Սե-

Պանները, աթոռները, փայտե մահճակալները գաղահանում են քլորակրի շաղախով: Մետաղի և ապակե ամանեղենը գաղահանում են լուծիչներով, իսկ աչնուհետև լվանում են տաք ջրով և տրորում, չորացնում են:

ՅԵՐՐՈՐԴ ՆՈՐՍԱ

**ԲԺՇԿԱ—ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

**ԹԵՄԱ 12. ԹՈՒՆԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐՈՎ ՎԱՐԱԿՎԵԼՈՒ ՆՇԱՆՆԵՐԸ. ԻՆՔՆՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՓՈՆԱԴՄԱՐՁ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԹՆ ՎԱՐԱԿՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ**

ԹՆ մաշկա—պալարային ներգործությունը

ԹՆ մաշկա - պալարային ներգործության բնորոշ ներկայացուցիչներն են իպրիտն ու լյուեղիտը: Իպրիտի կաթիլներով հարվածվելու դեպքում նրա ներգործությունը չերևում է միայն հարվածելու ընդհանրաց 3-6 ժամ հետո: Սկզբում մաշկը կարմրում է, ապա սկսում է բշտել: 12-18 ժամից հետո սկսում են առաջանալ ջրջրոտ բշտիկներ: Բշտիկները պայթում են 4—6-րդ օրը, վորից հետո թեփոտում են կամ առաջանում են դանդաղ առողջացող վերքեր: Իպրիտն արագորեն թափանցում է մաշկի մեջ և լավ լուծվում է մաշկի տակ գտնվող ճարպալին շերտի մեջ, առանց կորցնելու իր հարվածող հատկությունները: Հեղուկ իպրիտն աչքի մեջ ընկնելով առաջացնում է ծանր վերքոտում և նույնիսկ կարող է զրկել տեսողությունից: Յեթե իպրիտով վարակված սնունդը մարդ կուլ է տալիս կամ խմում է ջուրը, ապա այդ առաջացնում բերանի խոռոչի, վորկորի, ստամոքսի և աղիքների վնասվածքներ, նմանապես և որգանիզմի ընդհանուր թունա-

վորում: Վարակման նշաններն են՝ սուր ձգող ցավեր ստամոքսում, փսխում, լերբեմն լուծ:

Իպրիտի գոլորշիներն ու մառախուղն առանձնապես ազդում են շնչառության և տեսողության որգանների վրա: Խիստ վարակված տեղում ամրան ամիսներին (ըստ Յեյտիուսի մոտ 20 աստիճան ջերմության ժամանակ) իպրիտի գոլորշիներով մաշկի լուրջ վնասվածք կարող է առաջանալ, յերբ մարդ 20—30 րոպե մնա վարակված տեղամասում, իսկ շնչառության և տեսողության որգանները տուժում են 5-10 րոպեից հետո: Չմրան պայմաններում իպրիտի գոլորշիները գործնականորեն վտանգավոր չեն, վորովհետև ցածր ջերմության ժամանակ իպրիտը թույլ է գոլորշիանում:

Իպրիտի գոլորշիներով շնչառության որգանների հարվածման նշանները հայտնաբերվում են մի քանի ժամից հետո կրծքի ցավի, խուպտության, հազի, հարբուխի գլխացավի ձևով: Հետագայում կարող են լինել ծանր բարդություններ (որինակ, թոքերի թարախակալած բորբոքում): Յերկրորդ— յերրորդ օրը նկատվում է շրթունքների, լնդերքի այրվածքներ. քթի լորձաթաղանթը ծածկվում է թարախոտ լորձուկներով: Միաժամանակ զարգանում են որգանիզմի ընդհանուր թունավորման յերևույթներ: Շնչառության որգանների համար առանձնապես վտանգավոր է իպրիտի մառախուղը. իպրիտի մառախուղի մեջ 2—3 անգամ ներշնչելը կարող է առաջ բերել մահացում:

Լյուիգիսը հիմնականում առաջացնում է միևնույն վնասվածքները, ինչ և իպրիտը, բայց ունի նաև վորոշ տարբերություններ: Նախ՝ նա ընդունակ է առաջացնելու վոչ միայն մաշկա—պալարական, այլ և գրգռիչ ներգործություն՝ առատ արցունք, սուր այրվածքներ քթի և

կոկորդի մեջ, փոշոց, լորձուկների հոս քթից, սրտախառնություն և փսխոց: Յերկրորդ, հեղուկ լյուբիգիտի ներգործութիւնը մաշկի վրա արտահայտվում է անհամեմատ ավելի արագ, քան իսպրիտի ներգործութիւնը. հարվածված սեղերում արդեն առաջին 30 րոպեյի ընթացքում յերևում է կարմրութիւն, զգացվում է այրվածք և ցավ. մաշկի ուռչելն ու բշտիկներ առաջանալն սկսվում են 4—8 ժամից հետո: Յերրորդ, լյուբիգիտն ավելի ուժեղ ներգործութիւն է ունենում ծանր հարվածումների դեպքում (փսխում, գիտակցութեան կորցնելը, մաշկի զգայութեան կորցնելը, ձեռքերի և վոտների ժամանակավոր պարալիչ):

Հեղուկ իսպրիտի կաթիլներով վնասվելու դեպքում ամենից առաջ պետք է իսպրիտի կաթիլները մաքրել մաշկի վրայից, ոգավելով անհատական սանիտարական կապոցից կամ բամբակի, մաուլայի, ծծան թղթի մաքուր լաթի ոգնութեամբ: Իսպրիտի կաթիլները մաքրելիս պետք է ուշադրութեամբ բամբակը կամ մաուլան մոտեցնել մաշկին և ծծեցնել կաթիլը, այնուհետև, մաշկի տուժած մասերը մի քանի անգամ պետք է սրբել լուծիչներով (բենզինով, սպիրտով, կերոսինով և այլն): Առաջին հնարավորութեան դեպքում իսպրիտից տուժողը պետք է տաք դուշ ընդունի կանաչ ոճառով:

Աչքերը պետք է լվանալ սոդայի մեկ-չերկու տոկոսային և բորաթթվի չերեք տոկոսային զուլ լուծույթով. լվացումը կատարվում է անընդհատ շիթով: Նույնպիսի լուծույթով պետք է ողողել բերանը, կոկորդը և քթի ծակերը: Իսպրիտի գոլորշիներից և մաուլախուղից տուժելու դեպքում ամենից առաջ պետք է լվանալ աչքերը և ողողել բերանը, կոկորդը, քթածակերը և ապա լողանալ դուշի տակ:

Յեթե մաշկը տուժել է լյուբիգիտից, ապա պետք է բամբակի, մաուլայի և այլն կտորներով ուշադրութեամբ ծծեցնել լյուբիտի կաթիլները. այնուհետև պետք է մաշկը լվանալ կծու նատրի հինգ տոկոսային ջրային լուծույթով և լողանալ դուշի տակ: Աչքերը, բերանը և քթածակերը պետք է լվանալ նույն ձևով, ինչպես և իսպրիտից տուժելու դեպքում:

### Խեղդող ԹՆ ԳՆԵՐԳՈՐԾՈՒՄԸ

Խեղդող ԹՆ հարվածում են շնչառութեան որդաները, առաջացնելով հիվանդագիտի հագ և թուլութիւն: Ծանր թունավորումների ժամանակ սկսվում է տանջալից հագ խոխոցով և խզխոցով, արտաթորվում է փրփրոտ խորխո (չերբեմն արյունով), սկսվում է ուժեղ թուլութիւն, խռուպտութիւն և ձայնի խզում: Ձեռքերն ու վոտները կապտում և սախչում են: Կարող է զարգանալ թոքերի ուռուցք, վոր հասցնում է մահվան: Այս բոլոր յերևույթները լինում են քլորով և ֆոսգենով վնասվելու դեպքում: Տարբերութիւնն այդ յերկուսի միջև ամենից առաջ այն է, վոր փոքր քանակութեամբ գործածված ֆոսգինի ներգործութիւնը մի անգամից չի արտահայտվում: Ֆոսգենի վոչ մեծ քանակութեան յերկարատև ներգործութեան ժամանակ թունավորումն ընթանում է հետևյալ կերպ. սկզբում, հենց առաջին ներշնչումների ժամանակ սկսվում է թեթև հագ, թուլ գլխապտույտ, բնորոշ համ բերանում, իսկ այնուհետև այդ բոլոր յերևույթներն անհետանում են և 4—6 ժամվա ընթացքում տուժողն իրեն համեմատաբար լավ է զգում: Այնուհետև արագ և ուժեղ սկսվում է զարգանալ ծանր թունավորումը, սկսվում է շնչարգելութիւն, հաղ, փրփրոտ և արյունոտ խորխով, փսխում թոքերի ուռչում

և այլն: Փոսգենով թունավորվելը հաճախակի վերջանում է մահով, մահավանդ, չեթե համեմատաբար թվացող լավ վիճակում տուժողը շարժումներ է արել կամ վորևե ֆիզիկական աշխատանք է կատարել: Մեծ քանակությամբ գործածված ֆոսգենի ներգործման դեպքում ծանր՝ ձևի թունավորումը կարող է զարգանալ շատ արագ՝ թունավորված ողը մի քանի անգամ ներշնչելուց հետո:

Քլորով հարվածելու դեպքում թունավորումը զարգանում է հենց առաջին ներշնչումներից սկսած, և աստիճանաբար ուժեղանում են վերելում նկարագրված վարակման նշանները:

Քլորով կամ ֆոսգենով թունավորվածին ոգնություն ցույց տալու համար ամենից առաջ անհրաժեշտ է անմիջապես դադարեցնել թՆ ներգործությունը որգանիզմի վրա, այսինքն, դուրս տանել վարակված շրջանից, կամ սարքին հակազաղ հագցնել: Բոլոր դեպքերում ցանկալի չե, վոր վարակվածն ինքը տեղից տեղ չըգա, այլ վոր նրան փոխադրեն ուրիշները:

Առաջին հնարավորության դեպքում պետք է բերանն ողողել սոդայի լեղակոսային լուծույթով և աչքերը լվանալ սոդայի մեկտոկոսային կամ բորաթթվի 1—2 տոկոսային լուծույթով: Յեթե այդ լուծույթներից ձեռքի տակ չկա, ապա լվանալ ջրով: Վարակվածին պետք է լիակատար հանգիստ տալ, պառկեցնել, տաք ծածկել, տաք ըմպելիք տալ (թեյ, կաթ, սուրճ), թույլ չտալ ծխելու: Հազալու դեպքում տալ ներշնչելու սոդայի լեղակոսային լուծույթ կամ չեթեր (բամբակից): Յեթե ձեռքի տակ թթվածնի բարձ կա, ապա ներշնչել տալ թթվածին: Վոչ մի դեպքում արհեստական շնչառություն չանել:

## Ընդհանուր թունավորում պատհառող թՆ

Այս թՆ շնչառության որգանների միջոցով հարվածում են ներվային սխտեմը կամ արյունը: Թունավորման նշաններն են գլխապտույտ, սրտի խփոց, ընդհանուր թուլություն, սրտախառնություն, փսխում, գլխացավ, գիտակցության վորոշ թուլություն, իսկ ծանր թունավորման դեպքերում՝ ուշաթափություն, շնչառության խիստ թուլություն կամ կանգնում, շղաձուլություններ, պարալիչ (անդամալուծություն) վորին կարող է հետևել արագ մահացություն:

Ընդհանուր թունավորում պատհառող թՆ թվին են պատհանում ածխաթթու (ուգարի գազը) յեվ կապսարթուն: Փոքր քանակությամբ գործածված ածխաթթով թունավորվելու դեպքում տուժողը զգում է գլխում ծանրություն ու գլխացավ, ախանջների խշխոց, տեսողության մթաղանում, սրտախառնություն, գիտակցությունը կեսով չափ կորցնում է: Մեծ քանակությամբ գործածված ածխաթթվից կորցնում են գիտակցությունը, մարմնի վրա դուրս է տալիս կարմիր ցան կամ վարդագույն բծեր, դեմքը կարմրում է: Կապսարթվով թունավորվելու դեպքում թունավորման ընդհանուր պատկերը չափազանց արագ է զարգանում: Կոկորդում քերծվածք, բերանում դառն համ դղալուց, սրտախառնությունից, գլխացավից և շնչարգելությունից հետո թունավորվածը կորցնում է գիտակցությունը և սկսվում են տակալի շղաձուլումներ: Այնուհետև կանգ է առնում շնչառությունը և դադարում է սրտի աշխատանքը: Այս բոլոր լեղակոսայինները կարող են կատարվել մի քանի տասնյակ վարկյանի ընթացքում: Ոգնությունը պետք է ցույց տրվի շատ արագ, այլապես թունավորումը կարող է վերջանալ մահացությամբ:

Հիվանդին պետք է դուրս տանել թարմ ոդ, տալ զրգոիչ միջոցներ (փաթաթել սառը ջրում թրջած սավանի մեջ, շփել թաց կտորով, դուրս հանել լեցուն, տալ հոտոտելու անուշադրի (նաշատիրնի) սպիրտ տաք սուրճ): Յեթե այդ ամենը չեն ոգնում, պետք է յերկարատև արհեստական շնչառություն անել և ապա թունավորվածին տալ լիակատար հանգիստ, տաք ծածկել, տալ տաք ըմպելիք:

### Գրգռիչ ներգործություն ունեցող ԹՆ

Գրգռիչ ներգործություն ունեցող ԹՆ հարվածում են աչքերը կամ քթի և կոկորդի լորձաթաղանթը: Աչքերում սկսվում է զգացվել այրվածք և ծակոց, առատ արտավաբերություն, աչքերը չեն դիմանում լույսին, կուպերը կարմրում և ուռչում են, կոպերը շղաձգաբար փակվում են: Քթի և կոկորդի զրգովելու զեպքում ամենից առաջ քթում և կոկորդում սկսվում է սուր այրվածք, քերծվածք և խտխտոց: Հաճախ լինում է անընդհատ փուշտոց, քթից լորձունք է հոսում, քթում և կոկորդում զգացվում է ցավ, նրանք ուռչում են, առատ թուք է արտադրվում, կրծքի վանդակում ճնշում է զգացվում, լինում է գլխացավ, հազ, յերբեմն ել ցավում են ատամները, ծնոտները, փսխել են սկսում:

Քլորացեսոճենոնը առաջացնում է աչքերի սուր գրգռում, իսկ մեծ քանակությամբ գործածված լինելու զեպքում առաջացնում է հազ, հոս քթից և արտասվաբերություն:

Ադամսիսը առաջացնում է քթի և կոկորդի խիստ զրգռում: Նույնիսկ ազամսիտի ծխի ամպում կարճատև ժամանակ մնալը (2—3 ըոպե) մարդուն 2—3 ժամով զր-

կում է աշխատունակությունից: Ազամսիտի յերկարատև ներգործությունն առաջացնում է ծանր թունավորում:

Քլորացեսոճենոնով հարվածվելու զեպքում պետք է սողալի յերկտոկոսային լուծույթով կամ գոնե ջրով լվանալ աչքերը և ողողել բերանը: Վոչ մի զեպքում չի կարելի աչքերը ձեռքով տրորել կամ թաշկինակով սրբել: Դա ուժեղացնում է զրգռումը:

Ազամսիտով հարվածվելու զեպքում պետք է 1) սողալի յերկտոկոսային կամ բորաթթվի 2—3 տոկոսային լուծույթով լվանալ քիթը, կոկորդը և աչքերը. 2) ներշնչել անուշադիր (նաշատիրնի) սպիրտ, յեթեր, գինու սպիրտ: Ընդունել տաք թեյ կամ սուրճ:

ԹԵՄԱ 13. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱԿԱԻՊՐԻՏԱՅԻՆ ՅԵՎ ՎԻՐԱԿԱՊԱԿԱՆ ԿԱՊՈՑԻՑ ՈԳՏՎԵԼԸ, ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՇՆՁԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ, ԱՐՅՈՒՆՀՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԳՆԵՆԵԼԸ ՅԵՎ ՎԵՐԲԻ ԿԱՊԵԼԸ, ՏՈՒԺԱԾՆԵՐԻՆ ՓՈՆԱԴԻՆԵԼԸ

Անհատական հակաիպրիտային կապոցը ծառայում է մաշկի նախնական մաքրման համար, մաշկի վրա մաշկապալարային ԹՆ ընկնելու զեպքում: Կապոցը բաղկացած է փոքրիկ թիթեղյա տուփից, վորի մեջ դարսված են բամբակի և մաուլայի տամպոններ՝ խիստ մեծ ծիչների մեջ: Տամպոնները միացած են մեկ ընդհանուր թելով: Այդ թելը հեշտությամբ կտրելու համար տուփի վերևի մասում կա մի հատուկ թիթեղյա կտրիչ: Տուփի փափարիչի վրա ներսի կողմից հացելի կա, վորից պետք է ոգտվել դեմքը ԿԹՆ կաթիլները մաքրելիս:

Կապոցից պետք է ոգտվել հետեվյալ ձևով, բանալ կափարիչը և դուրս քաշել վերին տամպոնը, կտրել տամ-

պոննները միացնող թելը թիթեղյա կտրիչի ոգնությամբ. փոքր ինչ մզել տամպոնը. զգուշությամբ տամպոնով հանել ԿԹՆ կաթիլը: Այդ տամպոնը գցել մի կողմ և հանել հետևյալը և այն մզել մաշկի վարակված տեղի վրա: Այս ձևով մաշկի վարակված տեղը պետք է մաքրել 5.—10 րոպելի ընթացքում, մզած տամպոնները փոխելով նոր տամպոններով: ԿԹՆ վարաքված աչքը տամպոնով լվանալ չի կարելի:

Արյունհոսությունը կարելի չէ կանգնեցնել հետևյալ ձևով. մարմնի վիրավոր մասը պետք է վեր բարձրացնել, մեջքի տակ դնելով մի վորևե առարկա: Մղմել այն զարկերակները, վորոնցով արյունը հոսում է դեպի վերքը. այդպես կարելի չէ անել այն տեղերում, վորտեղ զարկերակը վոսկրից մոտիկ է գտնվում. պետք է մատներով շոշափել այն տեղը, վորտեղից խփում է արյունը և զարկերակը ուժեղ սղմել վոսկրին: Վերքից վերև գտնվող մասը կապել ձգված բավթայով, փոկով, թոկով, թելով, թաշկինակից կտրած ոլորով և այլն: Կապը փաթաթելուց առաջ մաշկը փաթաթել փափուկ կտորով, (թաշկինակ, բինտ), վորպեսզի մաշկը չը ճգնվի:

Վիրակապը հնարավորություն է տալիս կապելու իր կամ ընկերոջ վերքը, մինչև բժշկից ոգնություն ստանալը: Այդ կապոցը բազկացած է բամբակի և մառլայի չերկու կոմպրեսից (իրար վրա պինդ գարաված մառլայի չերկու քառակուսի կտոր, վորոնց արանքում բամբակ է դրված), մառլայի բինտից և անգլիական քորոցից: Կապոցի մեջի պարունակվածը փաթաթված է ամուր թղթի մեջ և գտնվում է ռետինացված կտորից կարած ծածկոցի (չեխոլի) մեջ, իսկ վերջինս դրված է բարակ կտորից կարած ծածկոցի մեջ:

Կապոցից պետք է ոգտվել հետևյալ ձևով. կապոցը

պետք է վերցնել ձախ ձեռքը, իսկ աջով քաշել ծածկոցի կարի թելը ծայրը: Հանել և դեն գցել ծածկոցը, պատուել ռետինացված կտորից կարած ծածկոցը և դեն գցել: Հանել անգլիական քորոցը, բացել թուղթը և վերցնել վիրակապական իրերը: Բինտը վերցնել աջ ձեռքը, իսկ ձախով բռնել բինտի ազատ ծայրից, վորին կարված է մառլայի կոմպրեսը: Պետք է հետևել, վոր ձեռքերը կամ հագուստը չդիպչեն կապի այն չերեսին, վորը դրվում է վերքի վրա (կապի այն կողմին, վորին կարելի չէ դիպչել, կարված է կարմիր թելով):

Բինտը փաթաթելիս պետք է կատարել հետևյալ կանոնները. բինտը պահել աջ ձեռքում, կոմպրեսը վերքի վրա պահել ձախ ձեռքով, իսկ աջով բինտը տանել վիրավորի մարմնի վրայով այնպես, վոր բինտը բերվի դեպի իր ձախ ձեռքի կողմը: Բինտը պետք է պինդ կպչի մարմնին, բայց վիրավորին պետք է ցավ չպատճառի և չխանգարի արյան շրջանառությանը (չեթե բինտը խանգարում է արյան շարժմանը, այդ դեպքում մաշկը բինտից ներքև ստռչում և կապտում է): Բինտը լավ փաթաթելու համար պետք է բինտը չեա ծալել: Չի կարելի կապը դնել հահուստի կամ սպիտակեղենի վրայից: Ձեռքերը կամ այլ առարկաներ չը դիպցնել վերքին, վերքը չրով կամ այլ հեղուկներով չը լվանալ: Փորձ չանել վերքից հանելու նրա մեջ վոված գնդակները կամ գնդակի բեկորները:

Վիրավորին տեղափոխելու համար նրան պետք է նստեցնել նստարանի ձևով պահած ձեռների վրա, կարճ տախտակի, փայտի վրա և այլն: Յեթե վիրավորը կորցրել է իր գիտակցությունը, ապա նրան չերկու հոգով առանց պատգարակի (նասիլկայի) տեղափոխելու ժամանակ տեղափոխողներից մեկը կանգնում է վիրավորի գլխի մոտ և նրան բռնում է արմուկների տակից. մյուսը

կանգնում է մեջքն արած վիրավորի և բռնում է նրա վտաններից՝ ծնկներից փոքր ինչ ցածր:

Արհեստական շնչառութիւնն կատարելու կարիք կլինի ամենից առաջ ընդհանուր թունավորում առաջացնող թ՛Ն պատճառած ծանր թունավորումների և գիտակցութիւնը կորցնելու ժամանակ, յերբ այս կամ այն պատճառով շնչառութիւնը ժամանակավորապես զադարել կամ խիստ թուլացել է:

Արհեստական շնչառութիւն յեղանակներից մեկը Շենֆելերի յեղանակն է: Այդ յեղանակով տուժածին փորի վրա պառկեցնում են գետնին, ձեռքերը ձգում են առաջ և գլուխը շուռ են տալիս կողքի վրա (տուժածի վրայից նախապես հանում են խանգարող հագուստը): Այնուհետև արհեստական շնչառութիւն կատարողը չորած կանգնում է այնպես, վոր տուժածի կոնքը գտնվի նրա ծնկների միջև: Իրանից հետո ոգնութիւնն ցույց տվողը մեկնում է իր ձեռքերը և զնում է տուժածի մեջքի վրա այնպես, վոր ձեռքի թաթերը գտնվեն տուժածի վողնաշարի յերկու կողմում, նրա ներքևի կողերին մոտիկ: Կռանալով առաջ, նա իր մարմնի ծանրութիւնը զցում է ձեռքի թաթերի վրա, և ճնշելով տուժածի կրծկի վանդակը, ստիպում է վոր նա արտաշնչի. զրանից հետո արհեստական շնչառութիւնն կատարողը զադարեցնում է ճնշումը և մի փոքր վեր է բարձրանում: այդ ժամանակ տուժածի կրծքի վանդակը ուղղվում է և ող է ներծծում: Այնուհետև, հերթով ճնշելով և ազատ թողնելով (մեկ րոպեյում 16—20 անգամ) տուժածի կրծքի վանդակը, արհեստական շնչառութիւնը շարունակում են այնքան ժամանակ, մինչև վոր տուժողն ինքը սկսի շնչել: Յեթե յերկու ժամվա ընթացքում տուժածն ինքը չի սկսում

շնչել, ապա արհեստական շնչառութիւնը, սովորաբար, անողուտ է այլևս:

Մյուսը՝ Սիլվեստրի յեղանակն է: Այս յեղանակը հետևյալն է. հագուստից զուսուղ են կապում և զնում են տուժածի մեջքի տակ: Ոգնութիւնն ցույց տվողը չորած կանգնում է տուժածի գլխի մոտ, բռնում է տուժածի արմունկներից ներքև և առանց շտապելու («մեկ—յերկու» հաշվով) նրա ձեռքերը բարձրացնում է տուժածի գլխավերևը և քաշում է դեպի իրեն: Սպասում է 2 վայրկյան, ապա «յերեք—չորս» հաշվով տուժածի արմունկները յետ է տանում և 2 վայրկյանով արմունկները կպցնում է կողքերին: Տուժածի արմունկների յերկարացնելու ծալը մեկ րոպեյում կատարում են 16—20 անգամ, այնքան ժամանակ, մինչև վոր տուժած մարդն ինքն սկսի շնչել ինքնուրույն կերպով: Արհեստական շնչառութիւնն կատարելիս պետք է հետևել, վոր տուժածի լեզուն յետ չընկնի:

ՁՈՐՈՐԳ ՆՈՐՄԱ

### ՀԱԿԱՅՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ 14. ԻՆՉՊԵՍ ՆՎԱԶԵՑՆԵԼ ՀՐԴԵՀԻ ՎՏԱՆԳԸ  
ՏԱՆ ՄԵՁ

Կրակի արագ տարածվելու վտանգը նվազեցնելու և պալքարը հրգեհի դեմ հեշտացնելու համար վաղորոք պետք է ձեռք առնել մի շարք նախազգուշական միջոցառումներ, այն է պետք է տանիքներից, նախասենյակներից հեռացնել հեշտ բռնկվող առարկաները. վորոշել սենյակներից մարդկանց զուրս բերելու կարգը՝ առաջուց նշված հարմար ճանապարհներով. պատրաստել հրամարիչներ,

ավագ՝ պարկերում և արկղներում, ջուր, լինգեր, բահեր  
դուլլեր, ջրատար ծորակները, և այդ ամենը գետեղել  
վորոշակի տեղերում. արգիլել, վոր բնակարաններում  
հեղուկ վառելիքի մեծ պաշարներ պահեն և ստուգել դրա  
կատարումը: Բոլոր սանդուղքների վրա տան ակտիվիստ-  
ներից կազմակերպել հրշեջ պատեր. տան բոլոր բնակիչ-  
ներին սովորեցնել, թե ինչպես պետք է վար-  
վել հրամարիչների հետ և թե ինչպես պետք է հրձիգ  
ոռւմբերից ծագած հրդեհը ավազով հանգցնել:

**ԹԵՄԱ 15. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՊԱՅՔԱՐԵԼ ՀՐՁԻԳ ՌՈՒՄ-  
ՔԻՑ ԾԱԳԱԾ ՀՐԴԵՀԻ ԴԵՄ.**

Հրձիգ ոռւմբի այրվող նյութը չի կարելի ջրով հանգ-  
ցրնել (ջուրը միայն սաստկացնում է հրդեհը), այլ պետք  
է ավագ ցանել: Շատ լավ կլինի, յեթե առաջուց պատ-  
րաստված լինեն 5—10 կիլոգրամանոց ավազով լի պար-  
կեր, վորոնց ավազը պետք է շող տալ կրակի ոջախի  
վրա Հրձիգ ոռւմբից կրակը շրջակա առարկաների և շեն-  
քերի վրա տարածվելու զեպքում նրանց կարելի յէ հանգ-  
ցնել սովորական լեղանակով, ջրի և հրամարիչների սգ-  
նությամբ:

**ԹԵՄԱ 16. ԻՆՉՊԵՍ ՈԴՏՎԵԼ ՁԵՌՔԻ ՀՐԱՄԱՐԻՉՆԵՐԻՑ.**

Ձեռքի հրամարիչները լավ միջոց են հրդեհի վոչ մեծ  
ոջախներն արագորեն հանգցնելու համար: Հրամարիչնե-  
րը պետք է ոգտագործել հետեվյալ ձևով. անոթը շուտ  
տալ հատակը դեպի վեր, մետաղյա ձողի ծայրի կոճակը  
խփել հատակին և հատուկ անցքից դուրս հոսող փրփու-  
րն ուղղել կրակի ոջախի վրա:

**ՀՈՔՊ-Ը ՏՆԵՐՈՒՄ**

**ԹԵՄԱ 17. ՏԱՆ ՀՈՔՊ-Ի ԼԻԱԶՈՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒ-  
ԹՅՈՒՆՆԵՐԸ**

Տան Հոքո-ի լիազորն այն անձնավորութունն, և վորը  
խորհրդային իշխանության և հասարակայնության առաջ  
պատասխանատու յէ տան հակողային և քիմիական  
պաշտպանության համար: Հոքո-ի լիազորներ են համար-  
վում տների կառավարիչները: Լիազորը տան բնակիչնե-  
նից կազմակերպում է Հոքո-ի ինքնապաշտպանության  
խմբակ և ինքը հանդիսանում է այդ խմբակի պետը: Նա  
հոգ է տանում, վոր տան բոլոր բնակիչները ծանոթ լի-  
նեն այն կանոնների հետ, վոր անհրաժեշտ է գործադ-  
րել հակառակորդի ողային հարձակման պայմաններում:

Լիազորը կազմակերպում է «Պատրաստ Հոքո-ի»  
տորմաների ուսումնասիրութունն ու հանձնումը տան  
բնակիչների կողմից: Նա պետք է իմանա, թե ինչ չափով  
բնակիչներն ապահովված են հակազագերով: Յեթե հա-  
կազագերի թիվը պակաս է, լիազորը կազմակերպում է  
հաշվազագերի գնումը բնակիչների կողմից: Նրա պարտա-  
կանութունն է բոլոր բնակիչներին սովորեցնել հակա-  
զագից ոգտվելու ձևը, կազմակերպել հակազագային սիս-  
տեմատիկ մարզանքներ և անցկացնել վարժութուններ՝  
ծխարկման խցերում:

Լիազորը պետք է հսկի, թե տան բնակիչները վոր-  
քան ճիշտ են կատարում հակահրդեհային պաշտպանու-  
թյան կանոնները: Նա հոգ է տանում, վոր առնն ապա-  
հոված լինի հակահրդեհային անհրաժեշտ կահավորումով,  
սիստեմատիկորեն ստուգում է այդ կահավորման վիճակը

և միջոցներ ե ձեռք առնում, վոր տան բոլոր բնակիչները կարողանան ձեռքի տակ լեղած միջոցներով հրդեհը հանգցնել և գիտենալ թե նրանցից յուրաքանչյուրն ինչ պետք ե անի հրդեհ ծագելու դեպքում:

Լիազորը, կարմիր խաչի կազմակերպության հետ միասին հոգ ե տանում, վոր տան բնակիչներին կազմվեն սանիտարական ողակներ և տունն ունենա առաջին ոգնուլթյան փոքրիկ դեղատուն, վոր բոլոր բնակիչները սովորեն ինքնուգնուլթյան և փոխադարձ ոգնուլթյան պարզ լեղանակները և հանձնեն «Պատրաստ սանիտարական պաշտպանուլթյան» նորմաները: Լիազորը միջոցներ ե ձեռք առնում ապաստարան ստեղծելու ողային ուղմբերից պաշտպանվելու, բնակարանները սարքավորելու հակաքիմիական տեսակետից և նախապատրաստվում ե լուսա—քողարկման միջոցառումների համար: Ողային հարձակումների ժամանակ կարգը պահպանելու համար լիազորը կազմակերպում ե հեղափոխական կարգը պահպանող ողակներ:

Ողային հարձակման պայմաններում լիազորը, հիմնվելով իր ստեղծած ՀՈՒՔՊ—ի ակտիվի՝ ինքնապաշտպանուլթյան խմբակի վրա, ապահովում ե այն կարգն ու կազմակերպվածուլթյունը, վորոնք անհրաժեշտ են ողային հարձակման հետևանքների դեմ հաջողուլթյամբ պայքարելու համար: Այդ նպատակով լիազորը վաղորդք մշակում ե ՀՈՒՔՊ—ի տան բնակիչների գործողուլթյունների պլանը՝ թշնամու ողային հարձակման դեպքում: Այդ պլանը լիազորը պետք ե հասցնի ամեն մի բնակչին:

**ԹԵՄԱ. 18. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Բնակչուլթյան հակողային և քիմիական պաշտպանուլ-

թյունն ամենից առաջ հենց իրեն բնակչուլթյան գործն ե: Ամեն մի բնակվարձկոպում և առանձին տան մեջ պետք ե կազմակերպված լինի ինքնապաշտպանուլթյան խմբակ, վորը բաղկացած ե քիմիական, հակահրդեհային, սանիտարական և հեղափոխական կարգը պահպանող ողակներից: Խմբակը գլխավորում ե տվյալ բնակվարձկոպի կամ տան լիազորը: Խմբակն անցնում ե ՀՈՒՔՊ—ի ուսացման դասընթացը, վորպիսին պետք ե կառուցված լինի այն հաշվով, վոր խմբակի յուրաքանչյուր անդամը կարողանա կատարել վոչ միայն տվյալ ողակի մարտիկի պարտականուլթյունները, այլ վոր ամբողջ խմբակը հարկավոր դեպքում կարողանա մասնակցել հրդեհ հանգցնելու, վիրավորներին և տուժածներին առաջին ոգնուլթյունը հասցնելու գործում: Խմբակի մարտիկները պետք ե հրահանգիչների դեր կատարեն, ոգնելով պետին (ՀՈՒՔՊ—ի լիազորին) սովորեցնելու տան բոլոր բնակիչներին, թե ինչպես պետք ե պաշտպանվել ողային հարձակումներից և ամբողջ տունը նախապատրաստել այդ պաշտպանուլթյան համար:

Խմբակն իր մարտական պատրաստուլթյունը պետք ե սերտորեն շաղկապի կուլտուրական, բարեկեցիկ բնակարան ստեղծելու պայքարի հետ: Սանիտարական ողակները կազմակերպվում են հերթապահուլթյուններ՝ դժբախտ դեպքերում անհետաձգելի ոգնուլթյուն ցուլց տալու տան բնակիչներին, հսկում են բնակարանների, բակերի մաքրուլթյան վրա, պայքարում են սանիտարական պայմանների բարելավման համար: Հրդեհաշեջ ողակները հսկում են տան հակահրդեհային ինվենտարի պահպանուլթյան վրա, և թե տան բնակիչները կատարում են արդյոք անվտանգուլթյան կանոնները պրիմուսներից, նավթավառերից, գազից ոգտվելու, հեղուկ վառելիք պահելու տեսակետից:

հսկում են ելեկտրոնագործման գծերի, վառարանների, ծխնելուզների, ջրամատակարարման սարքինդրու թյան վրա, հրդեհի դեպքում տունը պահուսի լեքերով ապահովելու վրա և այլն:

Քիմիական ողակները տան բնակիչներին ոգնում են քիմիական մեթոդներով պալքար կազմակերպելու բնակարանների վնասատուների և պարագիտների դեմ: Ամեն մի ողակ սովորաբար բաղկացած է 5 մարդուց, իսկ ինքնապաշտպանության խմբակը՝ 20 մարդուց:

Ինքնապաշտպանության խմբակը քաղաքացիական բնակչության ՀՈՔՊ-ի հիմքն է: Նա պետք է կազմակերպված լինի ամեն մի տան մեջ և պետք է հանդիսանա ՀՈՔՊ-ի այն սկզբնական կազմակերպությունը, վորը ՀՈՔՊ-ի բոլոր այլ ստորաբաժանումներից և խմբերից ավելի շուտ կարող է ոգնության դալ տվյալ բնակվարձկոտպի և տան բնակիչներին: Խմբակը տան բնակիչների ոգնությանը կարող է կատարել մի շարք անհետաձգելի աշխատանքներ, վերացնելով ողային հարձակման հետևանքները մինչև ՀՈՔՊ-ի քիմիական, ստնիտարական, հրշեջ և այլ խմբերի գալը, վորոնք ուղարկվում են հարվածման լենթարկված ոջախները: Վորքան ավելի շատ է տվյալ բնակավայրում ինքնապաշտպանության խմբակները թիվը, այնքան ավելի արագ, լրիվ և վստահորեն և ավելի նվազագույն կորուստներով կարելի լե վերացնել հակառակորդի ոգային հարձակման հետևանքները:



<< Ազգային գրադարան  
  
NL0270835

ԳԻՆԸ 45 ԿՈՊ.

3



**БУДЬ ГОТОВ К ПРОТИВОВОЗДУШНОЙ  
И ХИМИЧЕСКОЙ ОБОРОНЕ**  
Составлено А. МАЛЬШИНСКИМ  
Гиз ССР Армении, Эривань, 1935 г.

13.362